ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ТАМАР МАРГАРЯН

СПЕЦИФИКА ИНВЕСТИЦИОННЫХ СТРАТЕГИЙ КИТАЙСКИХ КОРПОРАЦИЙ

Ключевые слова: *Китай, инвестиции, бренд, вторжение, недвижимость, ренационализация, глобальная экономика, конкурентоспособность*

В статье рассматривается специфика инвестиционных стратегий китайских корпораций, основные направления и модели, которыми китайские корпорации осуществляют инвестиции за рубежом. В статье дана оценка китайской стратегии транснационализации бизнеса в целом.

TAMAR MARGARYAN

SPECIFICITY OF CHINESE CORPORATIONS INVESMENT STRATEGIES

Key words: *China, investment, brand, invasion, real estate, renationalization, global economy, competitiveness*

The article examines the specifics of the investment strategies of Chinese corporations, the main directions and the models that Chinese corporations invest abroad. The article gives an assessment of the Chinese strategy of transnationalization of business as a whole.

ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ ԴԵՐԸ ԻՍՊԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հիմնաբառեր. *Իսպանիա, Կատալոնիա, տնտեսության բացություն, զուտ արտահանում, օտարերկրյա ներդրումներ*

Ներկայումս Եվրոպայում տեղի ունեցող կարևոր իրադարձություններից մեկը Կատալոնիայի անկախության հանրաքվեի արդյունքների ու հնարավոր սցենարների շուրջ քննարկումներն են: Նման համատեքստում շատ կարևոր է վերլուծել ու բացահայտել Իսպանիայի տնտեսության մեջ Կատալոնիայի ունեցած դերն ու նշանակությունը: Սույն հոդվածում վերլուծվել ու համեմատվել են Իսպանիայի ու Կատալոնիայի մի շարք տնտեսական ցուցանիշներ, որոնց հիման վրա բացահայտվել է Կատալոնիայի կշիռը Իսպանիայի տնտեսության մեջ, ինչպես նաև ներկայացվել են այն դրական ու բացասական գործոնները, որոնք կարող են ազդել Կատալոնիայի վրա՝ վերջինիս հնարավոր անկախացման դեպքում:

Իսպանիան ունիտար (միացյալ) պետություն է, որի հիմնական վարչատարածքային միավորն ինքնավար համայնքն է: Ներկայումս Իսպանիայի ինքնավար համայնքների թի-

վը 17 է, որոնք բաժանված են 50 մարզերի, ինչպես նաև Իսպանիայի տիրապետության տակ են գտնվում մարզի կարգավիճակ ունեցող, այսպես կոչված, ինքնավար քաղաքներ Սեուտան և Մելիլյան, որոնք Աֆրիկայում են:

17 ինքնավար համայնքներից մեկն է Կատալոնիան, որը բաղկացած է 4 մարզից (Բարսելոնա, Ժիրոնա, Լլեյդա և Տարրագոնա):

Աղյուսակ 1

Ամփոփ տվյալներ Իսպանիայի և Կատալոնիայի վերաբերյալ (2016 թ.)[1]

	Իսպանիա	Կատալոնիա	Տեսակարար կշիռ
Տարածք (քառ. կմ)	505,990	32,108	6.35%
Բնակչություն 2016 թ.	46,445,828	7,448,332	16.04%
Խտություն (մարդ/քառ. կմ)	92	232	-
ՀՆԱ շուկայական գներով (մլն եվրո)	1,113,851	223,629	20.08%
Բնակչության 1 շնչի հաշվով ՀՆԱ	23,982	30,024	-

Աղյուսակ 1-ում ներկայացված են Իսպանիայի և Կատալոնիայի վերաբերյալ հակիրճ տվյալներ:

Աղյուսակ 1-ից երևում է, որ Կատալոնիան, լինելով 17 ինքնավար համայնքներից 1-ը և զբաղեցնելով Իսպանիայի տարածքի ընդամենը 6.35%-ը, տալիս է Իսպանիայի ՀՆԱ-ի ավելի քան 20%-ը, ինչպես նաև այստեղ է բնակվում Իսպանիայի բնակչության ավելի քան 16%-ը, ինչն արդեն վկայում է Իսպանիայում Կատալոնիայի առանցքային դերի մասին:

Իսպանիայում Կատալոնիայի ունեցած տնտեսական դերի ու նշանակության մասին պատկերացում կազմելու համար վերլուծենք մի շարք տնտեսական ցուցանիշներ:



Գծապատկեր 1. ***Իսպանիայի և Կատալոնիայի ՀՆԱ-ն և ՀՆԱ տարեկան հավելաճը (2010-2016 թթ.)[2]***

---

[1] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ www.idescat.cat/economia/?tc=5&id=5128&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=5704&lang=en վիճակագրական տեղեկատվության:

[2] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ www.idescat.cat/economia/?tc=5&id=5128&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=5704&lang=en վիճակագրական տեղեկատվության:



Գծապատկեր 2. ***Իսպանիայի և Կատալոնիայի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն (2010-2016 թթ.)***[1]

Ինչպես արդեն նշվեց, չնայած Կատալոնիայի բնակչությունը Իսպանիայի բնակչության մոտ 16%-ն է, սակայն ապահովում է Իսպանիայի ՀՆԱ-ի ավելի քան 20%-ը: Ավելին, ՀՆԱ հավելաճի տեմպով Կատալոնիան հիմնականում գերազանցում է Իսպանիային (գծապատկեր 1): Այս ամենով պայմանավորված՝ բնակչության 1 շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշով Կատալոնիան գերազանցում է Իսպանիայի համապատասխան ցուցանիշը մոտ 1.25 անգամ (գծապատկեր 2):

Գծապատկեր 3-ից երևում է, որ և՛ Իսպանայի, և՛ Կատալոնիայի ՀՆԱ-ներն ունեն նույն կառուցվածքը, իսկ տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ներում էականորեն չեն տարբերվում, ինչը վկայում է նրա մասին, որ 2 սուբյեկտների տնտեսություններն էլ հիմնված են նույն ճյուղերի վրա՝ ապահովելով գրեթե նույն կշիռները:



Գծապատկեր 3. ***Իսպանիայի և Կատալոնիայի ՀՆԱ-ների կառուցվածքը (2016 թ.)***[2]

[1] www.idescat.cat/economia/?tc=5&id=5128&lang=en, www.idescat.cat/economia/?tc=5&id=5704&lang=en

[2] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ www.idescat.cat/economia/?tc=5&id=5127&lang=en վիճակագրական տեղեկատվության:



Գծապատկեր 4. ***Իսպանիայի և Կատալոնիայի գործազրկության մակարդակները (2010-2016 թթ.)***[1]

Ինչ վերաբերում է գործազրկության մակարդակին, ապա այս ցուցանիշով ևս Կատալոնիան գտնվում է ավելի ցանկալի վիճակում, քան Իսպանիան: Գծապատկեր 4-ից ակնհայտ է, որ գործազրկության մակարդակը Կատալոնիայում 2-4 տոկոսային կետով միշտ ավելի ցածր է եղել, քան Իսպանիայում: Գործազրկության մակարդակը և՛ Իսպանիայում, և՛ Կատալոնիայում 2010 թ. մինչև 2013 թ. սկսել է աճել, իսկ 2013 թ. հետո՝ սահուն կերպով նվազել, սակայն հարկ է նշել, որ վերոնշյալ նվազումն առավել նկատելի է եղել Կատալոնիայում:

Աղյուսակ 2

Իսպանիայի և Կատալոնիայի արտաքին առևտրի համեմատական վերլուծություն (2010-2016 թթ.)[2]

		2010	2011	2012	2013	2014	2015	2016
Իսպանիա	Արտահանում (մլն եվրո)	186,780	215,231	226,115	235,814	240,582	249,794	254,530
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	15.23%	5.06%	4.29%	2.02%	3.83%	1.90%
	Ներմուծում (մլն եվրո)	240,056	263,141	257,946	252,347	265,557	274,772	273,284
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	9.62%	-1.97%	-2.17%	5.23%	3.47%	-0.54%
	Զուտ արտահանում	-53,276	-47,910	-31,831	-16,533	-24,975	-24,978	-18,754
	Զուտ արտահանում/արտահանում	-28.52%	-22.26%	-14.08%	-7.01%	-10.38%	-10.00%	-7.37%
	Արտահանման քվոտա	17.28%	20.11%	21.75%	22.99%	23.20%	23.22%	22.85%
	Ներմուծման քվոտա	22.21%	24.58%	24.81%	24.60%	25.61%	25.55%	24.54%
Կատալոնիա	Արտահանում (մլն եվրո)	48,872	54,989	58,881	58,981	60,314	63,906	65,161
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	12.52%	7.08%	0.17%	2.26%	5.96%	1.96%
	Ներմուծում (մլն եվրո)	67,621	72,173	70,324	67,860	72,909	76,988	78,349
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	6.73%	-2.56%	-3.50%	7.44%	5.60%	1.77%
	Զուտ արտահանում	-18,749	-17,184	-11,443	-8,879	-12,595	-13,082	-13,189
	Զուտ արտահանում/արտահանում	-38.36%	-31.25%	-19.43%	-15.05%	-20.88%	-20.47%	-20.24%
	Արտահանման քվոտա	23.30%	26.22%	28.88%	29.03%	28.99%	29.64%	29.14%
	Ներմուծման քվոտա	32.23%	34.41%	34.50%	33.40%	35.05%	35.70%	35.04%

[1] https://www.idescat.cat/pub/?id=aec&n=245&lang=en, Կատալոնիայի վիճակագրական ինստիտուտ, Բնակչության թվաքանակը 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ:

[2] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ www.idescat.cat/economia/?tc=5&id=0803&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=0804&lang=en վիճակագրական տեղեկատվության:

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ տնտեսության բացության մակարդակով (արտահանման և ներմուծման քվոտաներ (սահմանաչափեր)) Կատալոնիան գերազանցում է Իսպանիային, մինչդեռ 2 սուբյեկտների արտահանման և ներմուծման հավելաճերը էականորեն չեն տարբերվում, որի հետևանքով էլ և՛ Իսպանիայում, և՛ Կատալոնիայում զուտ արտահանման ցուցանիշի բարելավում է նկատվում: Մինչդեռ Իսպանիայի զուտ արտահանման ցուցանիշն ավելի արագ է բարելավվում, ինչի մասին վկայում է զուտ արտահանում/արտահանում ցուցանիշը, որը 2010 թ. 28.52%-ի փոխարեն 2016 թ. կազմել է ընդամենը 7.37%: Իսպանիայի զուտ արտահանման ցուցանիշը 2016 թ. մոտ 1.4 անգամ է գերազանցում Կատալոնիայի նույն ցուցանիշը (-18754/-13189), մինչդեռ նույն 2016 թ. Իսպանիայի արտահանումը ավելի քան 3.9 անգամ գերազանցում է Կատալոնիայինը (254530/65161):

Ինչ վերաբերվում է Կատալոնիայի արտահանման և ներմուծման կառուցվածքին, ըստ գործընկեր երկրների, ապա պատկերն այստեղ անհամեմատ մտահոգիչ է (աղյուսակ 3): Կատալոնիայի և՛ արտահանման, և՛ ներմուծման կառուցվածքում մեծ է ԵՄ երկրների կշիռը, ինչը վկայում է Եվրամիության անդամ երկրներից կախվածության բարձր մակարդակի մասին:

Աղյուսակ 3

Կատալոնիայի արտաքին առևտրի կառուցվածքում ԵՄ երկրների տեսակարար կշիռը (2010-2016 թթ.)[1]

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Արտահանում (մլն եվրո)	48,872	54,989	58,881	58,981	60,314	63,906	65,161
այդ թվում՝ ԵՄ (մլն եվրո)	32,564	35,929	36,717	36,940	39,055	41,567	42,879
այդ թվում՝ ԵՄ (%)	66.63%	65.34%	62.36%	62.63%	64.75%	65.04%	65.80%
Ներմուծում (մլն եվրո)	67,621	72,173	70,324	67,860	72,909	76,988	78,349
այդ թվում՝ ԵՄ (մլն եվրո)	37,893	40,964	38,976	39,721	42,844	45,417	46,698
այդ թվում՝ ԵՄ (%)	56.04%	56.76%	55.42%	58.53%	58.76%	58.99%	59.60%

Աղյուսակ 4-ից կարող ենք եզրակացնել, որ Իսպանիան վարկատու երկիր է, քանի որ դրա՝ դրսում կատարված ներդրումները գերազանցում են երկրի ներսում կատարվածը, չնայած վերջին տարիներին այդ տարբերությունն էականորեն նվազում է: Ինչ վերաբերում է Կատալոնիային, ապա բացառությամբ 2014 թ., մնացած տարիներին նա հանդես է գալիս վարկառուի դերում: Չնայած Կատալոնիան հիմնականում վարկառու սուբյեկտ է, այնուամենայնիվ ՀՆԱ-ում օտարերկրյա ներդրումների տեսակարար կշռով և՛ Իսպանիան, և՛ Կատալոնիան արձանագրում են գրեթե նույն ցուցանիշները: Դա նշանակում է, որ մոտ 5 անգամ պակաս ՀՆԱ ունեցող Կատալոնիան ներգրավում է համամասնորեն գրեթե նույն ծավալի ներդրումներ, ինչ Իսպանիան, որը վկայում է այս ցուցանիշով Կատալոնիայի ցածր մակարդակ ունենալու մասին: Ինչ վերաբերվում է ՀՆԱ-ի համեմատ

[1] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ www.idescat.cat/economia/?tc=5&id=0803&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=0804&lang=en վիճակագրական տեղեկատվության:

դրսում կատարված ներդրումներին, ապա այս ցուցանիշով Կատալոնիան նույնպես զիջում է Իսպանիային:

Աղյուսակ 4

Իսպանիայի և Կատալոնիայի ներդրումների համեմատական վերլուծություն (2010-2016 թթ.)[1]

		2010	2011	2012	2013	2014	2015	2016
Իսպանիա	Օտարերկրյա ներդրումներ (մլն եվրո)	12,356	28,794	14,721	17,153	20,281	24,294	24,790
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	133.04%	-48.88%	16.52%	18.24%	19.79%	2.04%
	Ներդրումներ դրսում (մլն եվրո)	30,988	30,934	17,802	25,814	30,406	31,570	28,983
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	-0.17%	-42.45%	45.01%	17.79%	3.83%	-8.19%
	Զուտ ներդրումային դիրք	18,632	2,140	3,081	8,661	10,125	7,276	4,193
	Օտարերկրյա ներդրումներ/ՀՆԱ	1.14%	2.69%	1.42%	1.67%	1.96%	2.26%	2.23%
	Ներդրումներ դրսում/ՀՆԱ	2.87%	2.89%	1.71%	2.52%	2.93%	2.93%	2.60%
Կատալոնիա	Օտարերկրյա ներդրումներ (մլն եվրո)	4,857	3,058	2,691	3,575	3,042	4,942	5,131
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	-37.03%	-12.02%	32.85%	-14.91%	62.48%	3.82%
	Ներդրումներ դրսում (մլն եվրո)	2,110	2,964	2,577	2,592	4,440	4,748	3,391
	Հավելաճը նախորդ տարվա համեմատ	-	40.50%	-13.07%	0.59%	71.28%	6.93%	-28.57%
	Զուտ ներդրումային դիրք	-2,747	-94	-114	-982	1,398	-195	-1,740
	Օտարերկրյա ներդրումներ/ՀՆԱ	2.32%	1.46%	1.32%	1.76%	1.46%	2.29%	2.29%
	Ներդրումներ դրսում/ՀՆԱ	1.01%	1.41%	1.26%	1.28%	2.13%	2.20%	1.52%

Հակասական պատկեր է ձևավորվում Կատալոնիայի ներդրումներում ԵՄ երկրների մասնաբաժնի վերաբերյալ: Կատալոնիայում կատարված ներդրումների գերակշիռ մասը բաժին է ընկնում ԵՄ երկրներին (2010 թ.՝ ավելի քան 95%), մինչդեռ այդ կախվածությունն աստիճանաբար թուլանում է՝ 2016 թ. ԵՄ երկրների մասնաբաժինը հասցնելով 67%-ի: Դրան հակառակ, մեծանում է ԵՄ երկրներում Կատալոնիայի կատարած ներդրումների տեսակարար կշիռը. եթե 2010 թ. դա մոտ 48% էր, ապա 2016 թ. այդ ցուցանիշը գերազանցում է 70%-ը (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Կատալոնիայի ներդրումների կառուցվածքում ԵՄ երկրների տեսակարար կշիռը (2010-2016 թթ.)[2]

	2010	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**
Օտարերկրյա ներդրումներ (մլն եվրո)	4,857	3,058	2,691	3,575	3,042	4,942	5,131
այդ թվում՝ ԵՄ (մլն եվրո)	4,656	2,399	2,281	2,708	2,203	3,752	3,438
այդ թվում՝ ԵՄ (%)	95.87%	78.45%	84.79%	75.77%	72.44%	75.92%	67.00%
Ներդրումներ դրսից (մլն եվրո)	2,110	2,964	2,577	2,592	4,440	4,748	3,391
այդ թվում՝ ԵՄ (մլն եվրո)	1,020	516	1,278	1,461	2,930	3,516	2,408
այդ թվում՝ ԵՄ (%)	48.36%	17.40%	49.58%	56.36%	65.99%	74.06%	71.00%

[1] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ www.idescat.cat/economia/?tc=5&id=0807&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=0812&lang=en վիճակագրական տեղեկատվության:

[2] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ www.idescat.cat/economia/?tc=5&id=0807&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=0812&lang=en վիճակագրական տեղեկատվության:

Աղյուսակ 6

Իսպանիայի և Կատալոնիայի զբոսաշրջիկների թվաքանակների համեմատական վերլուծություն (2010-2016 թթ.)[1]

		2010	2011	2012	2013	2014	2015	2016
Իսպանիա	Բնակչության թվաքանակ	46,486,621	46,667,175	46,818,216	46,727,890	46,512,199	46,449,565	46,445,828
	Աճը նախորդ տարվա համեմատ	-	0.39%	0.32%	-0.19%	-0.46%	-0.13%	-0.01%
	Զբոսաշրջիկների թվաքանակ (հզ. մարդ)	52,677	56,177	57,465	60,661	64,995	68,215	75,315
	Աճը նախորդ տարվա համեմատ	-	6.64%	2.29%	5.56%	7.14%	4.95%	10.41%
	1000 բնակչի հաշվով զբոսաշրջիկների թվաքանակ	1,133	1,204	1,227	1,298	1,397	1,469	1,622
	Աճը նախորդ տարվա համեմատ	-	6.23%	1.96%	5.77%	7.64%	5.10%	10.42%
Կատալոնիա	Բնակչության թվաքանակ	7,462,044	7,501,853	7,515,398	7,478,968	7,433,894	7,424,754	7,448,332
	Աճը նախորդ տարվա համեմատ	-	0.53%	0.18%	-0.48%	-0.60%	-0.12%	0.32%
	Զբոսաշրջիկների թվաքանակ (հզ. մարդ)	14,207	14,970	15,534	16,638	18,312	19,261	18,139
	Աճը նախորդ տարվա համեմատ	-	5.37%	3.77%	7.11%	10.06%	5.18%	-5.82%
	1000 բնակչի հաշվով զբոսաշրջիկների թվաքանակ	1,904	1,995	2,067	2,225	2,463	2,594	2,435
	Աճը նախորդ տարվա համեմատ	-	4.81%	3.58%	7.63%	10.72%	5.31%	-6.12%
Կատալոնիայի բնակչության կշիռն Իսպանիայում		16.05%	16.08%	16.05%	16.01%	15.98%	15.98%	16.04%
Կատալոնիայի զբոսաշրջիկների կշիռն Իսպանիայում		26.97%	26.65%	27.03%	27.43%	28.17%	28.24%	24.08%
Կատալոնիայի 1000 բնակչի հաշվով զբոսաշրջիկների կշիռն Իսպանիայում		168.01%	165.76%	168.40%	171.37%	176.28%	176.64%	150.18%

Աղյուսակ 7

Զբոսաշրջիկների ծախսերի համեմատական վերլուծություն Իսպանիայում և Կատալոնիայում (2015-2017 թթ. (ըստ եռամսյակների))[2]

		2015 II	2015 III	2015 IV	2016 I	2016 II	2016 III	2016 IV	2017 I	2017 II
Զբոսաշրջիկներ	Իսպանիայից Կատալոնիա (հզ. մարդ)	1,370	1,850	943	1,033	1,219	1,855	1,072	949	1,408
	Կատալոնիայից Իսպանիա (հզ. մարդ)	1,578	2,593	1,310	1,808	1,493	2,916	1,415	1,455	1,714
	Զուտ ներհոսք դեպի Կատալոնիա (հզ. մարդ)	-208	-744	-367	-776	-274	-1,061	-343	-506	-307
Ծախս	Իսպանիայից Կատալոնիա (մլն եվրո)	453	735	304	314	423	724	397	317	517
	Կատալոնիայից Իսպանիա (մլն եվրո)	339	760	271	396	339	916	320	281	336
	Զուտ ներհոսք դեպի Կատալոնիա (մլն եվրո)	114	-25	33	-82	84	-192	77	36	181

[1] www.idescat.cat/economia/?tc=5&id=0315&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=0336&lang=en

[2] www.idescat.cat/economia/?tc=5&id=0343&lang=en և www.idescat.cat/economia/?tc=5&id=0339&lang=en

Կատալոնիան (մասնավորապես՝ Բարսելոնան) նաև խոշոր զբոսաշրջային կենտրոն է ինչպես Իսպանիայում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Ուստի հետաքրքրություն է ներկայացնում նաև զբոսաշրջության զարգացման մակարդակը և՛ Կատալոնիայում, և՛ Իսպանիայում: Աղյուսակ 6-ից կարող ենք նկատել, որ, բացառությամբ 2016 թ., զբոսաշրջության հավելաճի ցուցանիշով Կատալոնիան հիմնականում գերազանցում է Իսպանիային: Եթե հաշվի առնենք նաև այն, որ Կատալոնիայի բնակչությունը Իսպանիայի բնակչության մոտ 16%-ն է, իսկ Կատալոնիա այցելող զբոսաշրջիկները Իսպանիա այցելող զբոսաշրջիկների մոտ 27-28%-ն են, ապա ակնհայտ է, որ 1000 բնակչի հաշվով Կատալոնիա այցելած զբոսաշրջիկների թիվն անհամեմատ գերազանցում է Իսպանիայի նույն ցուցանիշը, ինչը, բացառությամբ 2016 թ., կազմում է ավելի քան 1.6-1.7 անգամ:

Աղյուսակ 7-ում ներկայացված են Իսպանիայից Կատալոնիա, ինչպես նաև Կատալոնիայից Իսպանիա այցելած զբոսաշրջիկների թվաքանակն ու վերջիններիս կատարած ծախսերը: Աղյուսակից երևում է, որ չնայած Կատալոնիայից Իսպանիա ավելի շատ զբոսաշրջիկներ են այցելում, քան հակառակ ուղղությամբ, սակայն Իսպանիայից Կատալոնիա այցելող զբոսաշրջիկներն ավելի շատ գումար են ծախսում Կատալոնիայում, քան Կատալոնիայից Իսպանիա այցելող զբոսաշրջիկները՝ Իսպանիայում:

Այսպիսով, ուսումնասիրելով և վերլուծելով Իսպանիայի և Կատալոնիայի մի շարք տնտեսական ցուցանիշներ, կարելի է ներկայացնել գործոններ, որոնք կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ Կատալոնիայի վրա՝ վերջինիս հնարավոր անկախացման դեպքում:

Դրական գործոններն են.

- Կատալոնիան առանցքային դեր ունի Իսպանիայի տնտեսությունում. Կատալոնիայի բնակչությունը Իսպանիայի բնակչության ավելի քանի 16%-ն է, իսկ ՀՆԱ-ն՝ Իսպանիայի ՀՆԱ-ի ավելի քան 20%-ը:
- Բնակչության 1 շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշով Կատալոնիան արձանագրում է բարձր արդյունքներ՝ գերազանցելով Իսպանիային:
- Կատալոնիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը էականորեն չի տարբերվում Իսպանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքից:
- Գործազրկության մակարդակը Կատալոնիայում ավելի ցածր է, քան Իսպանիայում:
- Կատալոնիան ունի նաև տնտեսության բացության ավելի բարձր մակարդակ, քան Իսպանիան:

Բացասական գործոններն են.

- Չնայած ՀՆԱ-ի հետ համեմատած Կատալոնիայի արտահանման և ներմուծման ցուցանիշներն ավելի բարձր են, քան Իսպանիայի նույն ցուցանիշները, այնուամենայնիվ, Իսպանիայի զուտ արտահանման ցուցանիշն ավելի արագ է բարելավվում, քան Կատալոնիայի նույն ցուցանիշը:
- Կատալոնիայի արտահանման և ներմուծման կառուցվածքում մեծ է ԵՄ անդամ պետությունների կշիռը, ինչը վկայում է մեծ կախվածության մասին:

- Կատալոնիան հիմնականում վարկառու երկիր է, ինչը նշանակում է, որ քաղաքական անկայունությունը կարող է բացասական ազդել ներգրավվող ներդրումների վրա:
- ԵՄ անդամ պետությունների դերը մեծ է նաև արտահանվող և ներկրվող կապիտալների ծավալներում, ինչի հետևանքով կրկին մեծ է կենտրոնացվածության մակարդակը:
- Չնայած Կատալոնիայից ավելի շատ զբոսաշրջիկներ են այցելում Իսպանիա, քան հակառակ ուղղությամբ, այնուամենայնիվ, Իսպանիայից եկած զբոսաշրջիկներն ավելի շատ գումար են ծախսում Կատալոնիայում, քան Կատալոնիայից Իսպանիա այցելող զբոսաշրջիկներն Իսպանիայում:

Այսպիսով, չնայած Իսպանիայի տնտեսությունում Կատալոնիայի ունեցած առացքային դերին, կարծում ենք՝ վերջինս լուրջ կախվածություն ունի և՛ Իսպանիայից, և՛ հատկապես ԵՄ անդամ պետություններից:

АРА МКРТЧЯН

РОЛЬ КАТАЛОНИИ В ЭКОНОМИКЕ ИСПАНИИ

Ключевые слова: *Испания, Каталония, открытость экономики, чистый экспорт, иностранные инвестиции*

Одним из самых важных событий в Европе сегодня является обсуждение результатов референдума по независимости Каталонии и возможные сценарии. В этом контексте очень важно проанализировать и определить роль и значение Каталонии в экономике Испании. В этой статье анализируется и сравнивается ряд испанских и каталонских экономических показателей, на основе которых был выявлен вес Каталонии в испанской экономике, а также представлены положительные и отрицательные факторы, которые могут повлиять на Каталонию в случае его возможной независимости.

ARA MKRTCHYAN

THE ROLE OF CATALONIA IN THE ECONOMY OF SPAIN

Key words: *Spain, Catalonia, open economy, net export, foreign investments*

One of the key events in Europe today is the discussion regarding the results of Catalonia's independence referendum and the following possible scenarios. In this context, it is very important to analyze and identify the role and importance of Catalonia in the Spanish economy. This article analyzed and compared a number of Spanish and Catalonian economic indicators based on which Catalonia's weight was revealed in the Spanish economy, as well as number of positive and negative factors were presented that could influence on Catalonia in case of getting independence.